ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՀՐԱՎԵՐ

Հարգելի գիտնականներ և փորձագետներ,

Սիրով հրավիրում ենք Ձեզ մասնակցելու ՀՀ Պաշտպանության նախարարության Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի կողմից կազմակերպվող «Հայկական ռազմաարդյունաբերության զարգացման ժամանակակից մարտահրավերները և հնարավորությունները» խորագրով հանրապետական գիտաժողովին, որը տեղի կունենա սույն թվականի դեկտեմբերի 15-ին:

Գիտաժողովի հիմնական նպատակն է ռազմաարդյունաբերության զարգացումը դիտարկել որպես արդի աշխարհաքաղաքական պայմաններում երկրի անվտանգության մակարդակի բարձրացման և տնտեսական զարգացման փոխկապված խնդիրների լուծման առավել արդյունավետ ուղի, և այդ համատեքստում ուրվագծել ոլորտի զարգացման հիմնական ուղղություններն ու առաջնահերթությունները: Շեշտադրվելու է ժամանակակից պատերազմների բնույթի փոփոխության ազդեցությունը ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման պահանջների և ռազմատնտեսական անվտանգության աստիճանի բավարարության վրա:

Գիտաժողովի հատընտիր նյութերը հրապարակվելու են ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի «Աշխատանքային տետրեր» գիտական հավելվածում:

Գիտաժողովի կազմկոմիտե

Տ.գ.թ., դոցենտ Գ. Է. Հարությունյան,
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ Ռազմավարական խաղերի և մոդելավորման խմբի պետ
Ռ.գ.թ. Հ. Հ. Հովհաննիսյան,
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ Ռազավարական առանջնորդության և կառավարման հետազոտությունների կենտրոնի պետ
Տ.գ.թ. Ա. Գ. Դավթյան,
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ Ռազմավարական խաղերի և մոդելավորման խմբի գիտնական-վերլուծաբան

Գիտաժողովի կազմակերպման ժամանակացույց

Զեկույցների (հոդվածների) վերնագրեր և համառոտագրեր	**2019 թ. նոյեմբերի 5**
Նյութերի ընդունման հաստատումը հեղինակներին կուղարկվի նոյեմբերի 11-ին	
Զեկույցների (հոդվածների) ամբողջական տեքստ	**2019 թ. դեկտեմբերի 5**
Նյութերի գիտական փորձաքննության արդյունքների մասին հեղինակներին կտեղեկացվի դեկտեմբերի 11-ին	
Գիտաժողովի ծրագիրը մասնակիցներին կուղարկվի դեկտեմբերի 13-ին	
Գիտաժողովի լիագումար նիստ	**2019 թ. դեկտեմբերի 15**
Գիտաժողովի նյութերի հրապարակումը նախատեսված է 2020թ. հունվարին	

Գիտաժողովին ներկայացվող նյութերի նկատմամբ տեխնիկական պահանջները

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով՝ շարված GHEA Grapalat կամ Sylfaen տառատեսակով, 12 տառաչափով, 1.5 ինտերվալով, 8-15 էջի սահմաններում, A4 ձևաչափի թղթի վրա՝ եզրերից թողնելով 2-ական սմ հեռավորություն: Գիտական հոդվածները ներկայացնել տողատակով հետևյալ կերպ՝ հեղինակի(ների) անվան, հայրանունի առաջին տառը և ազգանունը, նյութերի լրիվ անվանումը, հրատարակության տվյալները (հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջերը): Հոդվածերին պետք է կցել նաև ամփոփագրեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև՝ 8-10 բանալի բառեր (հայերեն, ռուսերեն և անգլերեն):

Համառոտագրերը պետք է ներկայացվեն տեխնիկական նույն պահանջներին համապատասխան՝ 120-150 բառի սահմաններում: Համառոտագրերում պետք է ընդհանուր դրույթներով ներկայացնել, թե ինչպիսի հարցեր են արծարծվելու հոդվածում:

Առանձին ֆայլով ներկայացնել հոդվածի վերնագիրը, հեղինակի անունը, հայրանունը, ազգանունը (ամբողջությամբ), հեղինակի գիտական աստիճանը, կոչումը, աշխատանքի վայրը, պաշտոնը և կոնտակտային տվյալները (էլ. հասցե, հեռախոս):

ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային
հետազոտական համալսարանի պետ **գեներալ-մայոր Գ. Տավարածյան**